ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 91-Լ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տնտեսական վարչության պետին՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության կողմից ներկայացված հայտերին համապատասխան ապահովել սույն հրամանով հաստատված ձևաթղթերի տպագրումը:

3. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա

տարածքային ստորաբաժանումների պետերին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո կազմակերպել հրամանի ուսումնասիրությունը և մեկամսյա ժամկետում ծառայողներից ընդունել ստուգարքներ:

4. Հրամանը ծանոթացնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության իրավասու ծառայողներին և աշխատողներին:

5.Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հաստատված է էլեկտրոնային
ստորագրությամբ 17.12.2024թ.

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարի

« 17 » 12. 2024թ.

Թիվ 91 - Լ հրամանի

ԿԱՐԳ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ

1.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հավելվածով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ենթակա տարածքային ստորաբաժանումներում (այսուհետ՝ տարածքային ստորաբաժանում) ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու ընթացակարգը:

2. Սույն հավելվածի համաձայն կանխարգելիչ հաշվառման են վերցվում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած այն անձինք, որոնց նկատմամբ կայացվել է նախազգուշացման, անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունեցող անձինք (այսուհետ՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձինք):

3. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) **կանխարգելիչ հաշվառում՝** տարածքային ստորաբաժանումներում տեղեկությունների կենտրոնացված հաշվառում.

2) **գրանցում՝** ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության (այսուհետ՝ վարչություն) կողմից իրականացվող՝ քարտային և համակարգչային հաշվառում, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումում կանխարգելիչ հաշվառման քարտերի, դրանցով անցնող անձանց, փաստերի, դեպքերի վերաբերյալ ստացված տեղեկությունների մատյանային հաշվառում.

3) **կանխարգելիչ հաշվառման քարտ՝** կանխարգելիչ աշխատանքների անցկացման արդյունքում ստացված տեղեկությունների ստուգման, համակարգման, վերլուծության, ինչպես նաև դրանց հիման վրա ընդունված որոշումների փաստը, բովանդակությունը և արդյունքներն արտացոլող ծառայողական փաստաթղթերի կուտակման ձև:

4. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց նկատմամբ տարածքային ստորաբաժանման կողմից իրականացվող կանխարգելիչ աշխատանքների նկատմամբ վերահսկողությունը և մեթոդական աջակցման ցուցաբերումն իրականացնում են վարչությունը, ենթակա տարածքային բաժնի պետը և նրա տեղակալը:

5. Սույն կարգով սահմանված աշխատանքները կազմակերպում, ղեկավարում և համակարգում է տարածքային ստորաբաժանման պետի տեղակալը:

6. Ոստիկանության՝ ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման և ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազորություն ունեցող իրավասու ծառայողն (այսուհետ՝ ոստիկանության իրավասու ծառայող) ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատում կատարելու ընթացքում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի անվամբ զենք հաշվառված լինելու փաստը հայտնաբերելու արդյունքում և «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված սահմանափակման կիրառման դեպքում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձից վերցնում է այդ պահին փաստացի նրա տիրապետման տակ գտնվող զենքը և ստացականով հանձնում հերթապահ մաս: Եթե զենքը գտնվում է բռնության կատարման փաստը հայտնաբերած ստորաբաժանման սպասարկման տարածքում, անկախ որոշման մասին այլ տարածքային ստորաբաժանմանն իրազեկելուց, զենք վերցնելու պարտականությունը կրում է բռնության փաստը հայտնաբերած ստորաբաժանումը:

7. Դատարանի կողմից պաշտպանական որոշմամբ Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով նախատեսված սահմանափակման կիրառման դեպքում պաշտպանական որոշման պատճենը ստանալուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, ոստիկանության իրավասու ծառայողը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձից փաստացի նրա տիրապետման տակ գտնվող զենքը վերցնելու համար և այն ստացականով հանձնում է հերթապահ մաս:

8. Եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքը հաշվառված է ոստիկանության այլ ստորաբաժանման կողմից և տվյալ պահին չի գտնվում բռնություն գործադրած անձի փաստացի տիրապետման տակ, ապա.

1) նախազգուշացում կիրառելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ որոշումը կայացրած տարածքային ստորաբաժանումն անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 ժամվա ընթացքում հեռախոսագրով (անհնարինության դեպքում՝ հերթապահ մասի հեռախոսային կապով) տեղյակ է պահում զենքի հաշվառումն իրականացնող ստորաբաժանմանը, որը միջոցներ է ձեռնարկում զենքի փաստացի գտնվելու վայրը

պարզելու, ինչպես նաև պահման պայմանները ստուգելու համար և արդյունքների մասին հնարավոր սեղմ ժամկետում գրավոր հայտնում որոշումը կայացրած ստորաբաժանմանը.

2) Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված սահմանափակման կիրառման դեպքում՝ անհետաձգելի միջամտություն կիրառելու մասին որոշումը կայացրած տարածքային ստորաբաժանման ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում հեռախոսագրով (անհնարինության դեպքում՝ հերթապահ մասի հեռախոսային կապով) տեղյակ է պահում զենքի փաստացի գտնվելու վայրը սպասարկող և հաշվառումն իրականացնող ստորաբաժանմանը: Զենքի փաստացի գտնվելու հասցեն սպասարկող տարածքային ստորաբաժանման իրավասու ծառայողն ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձից անհապաղ վերցնում է զենքը և ստացականով ի պահ հանձնում հերթապահ մաս, այնուհետև զենքը վերցնելու մասին հեռախոսագրով հայտնում է որոշումը կայացրած ստորաբաժանմանը.

3) Օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով նախատեսված սահմանափակման կիրառման դեպքում՝ պաշտպանական որոշման կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող տարածքային ստորաբաժանման ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան պաշտպանական որոշումը ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում հեռախոսագրով (անհնարինության դեպքում՝ հերթապահ մասի հեռախոսային կապով) տեղյակ է պահում զենքի փաստացի գտնվելու վայրը սպասարկող և հաշվառումն իրականացնող ստորաբաժանմանը: Զենքի փաստացի գտնվելու հասցեն սպասարկող տարածքային ստորաբաժանման իրավասու ծառայողն ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձից անհապաղ վերցնում է զենքը և ստացականով ի պահ հանձնում հերթապահ մաս, այնուհետև զենքը վերցնելու մասին հեռախոսագրով հայտնում է պաշտպանական որոշման կատարման նկատմամբ հսկողություն իրականացնող ստորաբաժանմանը:

9. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտություն կիրառելու մասին որոշում կայացնելուց հետո, ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի բնակվելու վայրը պարզելու նպատակով, գրավոր (անհրաժեշտության դեպքում՝ ֆաքսիմիլային կապով) հարցում է կատարում անձի փաստացի բնակության վայրի տարածքային ստորաբաժանում: Հարցումը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, անձի փաստացի բնակության վայրի տարածքային ստորաբաժանումը պատասխանն ուղարկում է հարցումը կատարողին:

10. Ոստիկանության իրավասու ծառայողը, սույն կարգի 9-րդ կետով նախատեսված հարցման պատասխանը ստանալուց կամ պաշտպանական որոշման պատճենը ստանալուց և անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների կատարման նկատմամբ հսկողության շրջանակներում առաջին այցելությունը սահմանված կարգով կատարելուց հետո նախապատրաստած բոլոր

նյութերը 1-օրյա ժամկետում ուղարկում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի փաստացի բնակության վայրի տարածքային ստորաբաժանում:

11. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կանխարգելիչ հաշվառումն իրականացվում է հաշվառվող անձի փաստացի բնակության վայրի տարածքային ստորաբաժանման կողմից: Եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձը չունի հաշվառում և բնակության վայր կամ հայտնի չէ բնակության վայրը, ապա վերջինս հաշվառման է վերցվում ընտանեկան և կենցաղային բռնության դեպքի վայրը սպասարկող տարածքային ստորաբաժանման կողմից:

12. Հաշվառման վերցնելու համար ոստիկանության իրավասու ծառայողն անձի հաշվառված լինելու հանգամանքը ստուգելու նպատակով նախազգուշացման կամ անհետաձգելի միջամտության որոշման կայացումից կամ պաշտպանական որոշման պատճենը կամ սույն կարգի 10-րդ կետով նախատեսված նյութերը ստանալուց և անձի դատվածության փաստը հավաստող տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր հարցում է կատարում վարչությանը: Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի հաշվառված չլինելու դեպքում ոստիկանության իրավասու ծառայողը կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու վերաբերյալ զեկուցագիրը հաշվառման վերցնելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է բաժնի պետին:

13. Ոստիկանության իրավասու ծառայողը բաժնի պետին ներկայացված զեկուցագրում նշում է կատարում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի անվամբ զենք հաշվառված լինելու կամ չլինելու փաստի մասին և հաշվառման վերցնելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերում ներառում է նաև թույլտվության համակարգի հաշվառումներով ստուգված լինելու փաստը հավաստող փաստաթուղթը, իսկ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով կամ 8-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով նախատեսված սահմանափակման կիրառման դեպքում՝ զենքը հերթապահ մաս ի պահ հանձնված լինելու փաստը հավաստող փաստաթուղթը: Բաժնի պետը «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 2-րդ և 4-րդ մասերի պահանջների կատարումն ապահովելու նպատակով հանձնարարական է տալիս բաժնի պետի տեղակալին: Եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի տիրապետման տակ գտնվող զենքի հաշվառումը վարվում է այլ տարածքային ստորաբաժանման կողմից, ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում գրավոր (անհրաժեշտության դեպքում՝ հեռախոսագրով) անձին հաշվառման վերցնելու մասին հայտնում է զենքի հաշվառումը վարող տարածքային ստորաբաժանմանը՝ վերոնշյալ օրենքի պահանջները կատարելու համար:

14. Ոստիկանության իրավասու ծառայողն ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտը գրանցում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց հաշվառման մատյանում (այսուհետ՝ մատյան)՝ ըստ Ձև 4-ի՝ դրան տալով հերթական համար: Հաշվառման քարտերի հերթական համարները յուրաքանչյուր տարի սկսվում են 01 թվից,

այնուհետև դրվում է գծիկ և նշվում հաշվառման տարեթվի վերջին երկու նիշերը: Հաշվառման քարտի համարը պետք է համընկնի մատյանում ընթացիկ տարվա հերթական համարի հետ:

15. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց, տարածքային ստորաբաժանումում հաշվառման վերցնելու և հաշվառումից հանելու մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում է վարչությանը, որտեղ իրականացվում է կենտրոնացված քարտային հաշվառում:

16. Կանխարգելիչ հաշվառման քարտի վարման ժամկետը 1 տարի է, եթե ընտանեկան և կենցաղային բռնության վերջին արարքից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կանխարգելիչ հաշվառման վերցված անձի նկատմամբ չի կայացվել նոր անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշում կամ համապատասխան հանցագործության համար մեղադրական դատավճիռ:

17. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձանց վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտերը պահվում են տարածքային ստորաբաժանման չիրկիզվող երկաթյա պահարաններում:

18. Հաշվառված անձի վերաբերյալ կազմվում է տեղեկատու քարտ՝ ըստ Ձև 3-ի՝, որին տրվում է միասնական հաշվառման մատյանի հերթական համարը: Տեղեկատու քարտերը պահվում են ոստիկանության հերթապահ մասի տեղեկատու քարտադարանում:

19. Տարածքային ստորաբաժանումում հաշվառման մեջ գտնվող անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ կիրառված պաշտպանության միջոցի խախտման դեպքում, ոստիկանության իրավասու ծառայողը համապատասխան զեկուցագիր է ներկայացնում ոստիկանության տարածքային բաժնի պետին: Հաշվառման մեջ գտնվող անձի կողմից բռնության կրկնման կամ կիրառված պաշտպանության միջոցի խախտման դեպքը ոստիկանության իրավասու ծառայողի կողմից արձանագրվելուց հետո 6-րդ օրը, ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վերաբերյալ կազմված կանխարգելիչ հաշվառման քարտն ուղարկվում է վարչություն: Վարչությունն ուսումնասիրում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վերաբերյալ կազմված կանխարգելիչ հաշվառման քարտը և խախտումներ հայտնաբերելու դեպքում զեկուցագիր է ներկայացնում ոստիկանության պետին կամ իրավասու տեղակալին և վերջիններիս ցուցումի հիման վրա կատարվում է ծառայողական քննություն:

20. Հաշվառված անձի փաստացի բնակության վայրի փոփոխության կամ բնակության վայրը պարզելու դեպքում տարածքային ստորաբաժանման ոստիկանության իրավասու ծառայողն այդ մասին տեղեկությունը ստանալուց հետո անհապաղ գրավոր տեղյակ է պահում վերջինիս բնակության հասցեն սպասարկող տարածքային ստորաբաժանմանը, որտեղից 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հավաստում ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, կանխարգելիչ հաշվառման քարտն ուղարկվում է բնակության վայրի տարածքային ստորաբաժանում:

21. Ոստիկանության իրավասու ծառայողի կողմից հաշվառման մեջ գտնվող անձի նոր բնակության վայրը պարզելու ուղղությամբ ձեռնարկվում են որոնողական միջոցառումներ: Անձի բնակության վայրը չպարզելու դեպքում ոստիկանության իրավասու ծառայողն այդ մասին նշում է կատարում կանխարգելիչ հաշվառման քարտում և 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին հայտնում վարչությանը և կանխարգելիչ հաշվառումը կասեցվում է: Կանխարգելիչ հաշվառումը կասեցվում է նաև ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ հետախուզում հայտարարելու դեպքում՝ 5-օրյա ժամկետում: Հաշվառվողի նոր բնակության վայրը պարզելու, ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին հայտնաբերելու դեպքերում ոստիկանության իրավասու ծառայողը վերսկսում է կասեցված հաշվառման քարտի վարումը և 1 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր հայտնում է վարչությանը: Սույն կարգի 16-րդ կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո հաշվառման մեջ գտնվող անձը հանվում է հաշվառումից՝ անկախ հաշվառումը կասեցված լինելու հանգամանքից:

22. Կանխարգելիչ հաշվառման քարտը ստանալուց անմիջապես հետո ոստիկանության իրավասու ծառայողը զեկուցագիր է ներկայացնում բաժնի պետին՝ հաշվառվող անձի նկատմամբ կանխարգելիչ աշխատանքները շարունակելու համար: Համապատասխան թույլտվություն ստանալուց հետո կանխարգելիչ հաշվառման քարտը գրանցվում է մատյանում՝ տալով նոր հերթական համար, որի ժամկետը հաշվարկվում է նախկին բնակության վայրի ոստիկանության տարածքային ստորաբաժանումում դրա կազմելու օրվանից:

23. Անձը կանխարգելիչ հաշվառումից հանվում է ոստիկանության իրավասու ծառայողի պատճառաբանված զեկուցագրի հիման վրա, բաժնի պետի թույլտվությամբ, որի մասին համապատասխան նշում է կատարվում մատյանում:

24. Հաշվառումից հանված անձանց քարտերը պահվում են մեկ տարի ժամկետով՝ տարածքային ստորաբաժանման ղեկավարի մոտ, որից հետո հանձնվում են ոստիկանության տարածքային բաժնի քարտուղարություն և ոչնչացվում սահմանված կարգով:

2. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՈՒՄ

25. Տարածքային ստորաբաժանումում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած չափահաս անձի հաշվառման նպատակն է նախականխել վերջինիս կողմից նոր իրավախախտումների կատարումը, ինչպես նաև կանխել ընտանեկան և կենցաղային բռնության կրկնումը կամ շարունակումը:

26. Կանխարգելիչ հաշվառումը վարվում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտի

միջոցով՝ ըստ Ձև 5-ի: Անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու վերաբերյալ կազմվում է տեղեկանք՝ ըստ Ձև 1-ի:

27. Կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու հիմքերն են՝

1) ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վերաբերյալ ոստիկանության իրավասու ծառայողի կողմից նախազգուշացում կիրառելու վերաբերյալ որոշումը.

2) ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վերաբերյալ ոստիկանության իրավասու ծառայողի կողմից անհետաձգելի միջամտություն կիրառելու վերաբերյալ որոշումը.

3) ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի նկատմամբ ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված պաշտպանական որոշումը.

4) ընտանեկան և կենցաղային բռնության հետ կապված հանցանքի համար դատվածություն ունենալու փաստը:

28. Ոստիկանության իրավասու ծառայողի կողմից կանխարգելիչ հաշվառման քարտ կազմվում է սույն հավելվածի 27-րդ կետի 1-ին կամ 2-րդ կետով նախատեսված որոշումը կայացնելուց կամ պաշտպանական որոշման պատճենը ստանալուց կամ անձի դատվածության փաստը հավաստող տեղեկատվությունը և վարչությունից անձի հաշվառված չլինելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում:

29. Նախքան ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձին հաշվառելը, վերջինս հրավիրվում է ոստիկանության տարածքային բաժին կամ հեռախոսակապի, պաշտոնական էլեկտրոնային կամ պատվիրված փոստի միջոցով իրազեկվում է իրեն կանխարգելիչ հաշվառման վերցնելու մասին, նրան ներկայացվում են կանխարգելիչ հաշվառման վերցնելու հիմքերը, կազմվում է նրան իրազեկելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք, որը ստորագրվում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի կողմից, իսկ ստորագրելուց հրաժարվելու դեպքում կատարվում է համապատասխան նշում՝ հրաժարվելու պատճառների մասին, և տեղեկանքը կցվում է կանխարգելիչ հաշվառման քարտին:

30. Կանխարգելիչ հաշվառման շրջանակներում, ընտանեկան և կենցաղային բռնությունը կանխարգելելու նպատակով, ոստիկանության իրավասու ծառայողն ամսական առնվազն մեկական առանձին հանդիպումներ է ունենում հաշվառման վերցված անձի ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ, իրականացնում բացատրական աշխատանքներ, ծանոթանում ընտանիքում տիրող իրավիճակին և ընտանիքի անդամների փոխհարաբերություններին կամ զուգընկերների կամ նախկին զուգընկերների միջև առկա փոխհարաբերություններին և կազմում համապատասխան տեղեկանք: Եթե ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձը փաստացի բնակվում է այլ տարածքում, և հնարավոր չէ իրականացնել նախատեսվող հանդիպումները, ապա ստացված գրության հիման վրա հանդիպումներն իրականացնում է փաստացի բնակության վայրի տարածքային ստորաբաժանման իրավասու ծառայողը և այդ մասին ամսական

պարբերականությամբ գրավոր հայտնում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի հաշվառումն իրականացնող տարածքային ստորաբաժանմանը:

31. Հոգեբուժական կազմակերպությունում հաշվառված կամ բժշկական օգնություն ու սպասարկում ստացող՝ կանխարգելիչ հաշվառվման վերցված անձանց հետ ոստիկանության իրավասու ծառայողի կողմից հանդիպումներ չեն իրականացվում, իսկ կանխարգելիչ բնույթի աշխատանքներն իրականացվում են բժիշկ-հոգեբույժի հետ անցկացվող զրույցների միջոցով՝ հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալուն չխոչընդոտելու պայմանով, որի վերաբերյալ կազմվում է արձանագրություն:

32. Կանխարգելիչ հաշվառման քարտին կցվում են՝

1) կցվող փաստաթղթերի ցանկը.

2) հաշվառման քարտ կազմելու թույլտվության մասին ոստիկանության բաժնի պետին ներկայացված զեկուցագիրը.

3) քարտ կազմելու համար հիմք հանդիսացած փաստաթղթերը.

4) քարտով կազմված զեկուցագրերը, ընթացիկ աշխատանքների մասին տեղեկանքները.

5) անձին հաշվառելու մասին իրազեկելու վերաբերյալ տեղեկանքը.

6) հաշվառվող անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, տեղեկանքներ բնակության վայրից, հաշվառվողի 3x4 չափի լուսանկարը.

7) հաշվառվող անձի վարքագիծը բնութագրող եռամսյակային պաշտոնական բնութագրեր բնակավայրից.

8) պետական, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպություններից հաշվառվող անձի վերաբերյալ ստացված՝ հաշվառվող անձի վարքագիծը բնութագրող տեղեկություններ և այլ փաստաթղթեր.

9) տեղեկություններ ընտանիքի անդամների կազմի և զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ առկայության մասին.

10) հաշվառման վերցված ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց հետ իրականացված աշխատանքների վերաբերյալ տեղեկանքներ.

11) հաշվառվող անձին հաշվառումից հանելու թույլտվության վերաբերյալ ոստիկանության բաժնի պետին ներկայացված զեկուցագիրը.

12) հաշվառվող անձին հաշվառումից հանելու հիմք հանդիսացած փաստաթղթերը.

13) ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձին աջակցության կենտրոն ուղղորդելու վերաբերյալ իրազեկման թերթիկը:

33. Հաշվառման մեջ գտնվող անձը հանվում է կանխարգելիչ հաշվառումից՝

1) եթե լրացել է կանխարգելիչ քարտի վարման ժամկետը.

2) մահվան կամ դատական կարգով մահացած կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

3) ազատազրկման դատապարտվելու դեպքում.

4) եթե պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշումը վերադասության կարգով կամ դատարանի որոշմամբ ճանաչվել է անվավեր կամ օրենքով նախատեսված դեպքերում վերացվել է:

34. Հաշվառման մեջ գտնվող անձի կողմից պարտադիր զինվորական ծառայության մեկնելու կամ նրա նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրվելու դեպքում կանխարգելիչ հաշվառումը կասեցվում է: Եթե պարտադիր զինվորական ծառայության կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում կանխարգելիչ հաշվառման քարտի վարման ժամկետը լրանում է, ապա անձը հանվում է կանխարգելիչ հաշվառումից:

35. Անձին հաշվառումից հանելու մասին կազմվում է տեղեկանք՝ ըստ Ձև 2-ի: Անձին հաշվառումից հանելու մասին ոստիկանության իրավասու ծառայողը 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է հաշվառվողին:

3. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՈՒՄ

36. Տարածքային ստորաբաժանումում ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահաս անձի կանխարգելիչ հաշվառման նպատակն է կանխել անչափահասի կողմից ընտանեկան և կենցաղային բռնության կրկնման կամ շարունակման դեպքերը, ինչպես նաև հայտնաբերել անչափահասի հակասոցիալական վարքագիծը և բարձրացնել վերջինիս իրավագիտակցության մակարդակը:

37. Կանխարգելիչ հաշվառումը վարվում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անձի վերաբերյալ կանխարգելիչ հաշվառման քարտի միջոցով՝ ըստ Ձև 5-ի: Անձին կանխարգելիչ հաշվառման վերցնելու վերաբերյալ կազմվում է տեղեկանք՝ ըստ Ձև 1-ի:

38. Հաշվառման քարտը կազմվում է 12-ից մինչև 18 տարեկան՝ ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասի նկատմամբ ոստիկանության իրավասու ծառայողի կողմից նախազգուշացման վերաբերյալ որոշում կայացնելուց կամ անձի դատվածության փաստը հավաստող տեղեկատվությունը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

39. Նախքան անչափահասին հաշվառելը անչափահասն օրինական ներկայացուցչի հետ հրավիրվում է ոստիկանության տարածքային բաժին կամ հեռախոսակապի, պաշտոնական էլեկտրոնային կամ պատվիրված փոստի միջոցով անչափահասը և նրա օրինական ներկայացուցիչն իրազեկվում են անչափահասին հաշվառման վերցնելու մասին, ներկայացվում են հաշվառման վերցնելու հիմքերը, կազմվում է նրանց իրազեկելու վերաբերյալ համապատասխան տեղեկանք, որը ստորագրվում է օրինական ներկայացուցչի կողմից, իսկ ստորագրելուց հրաժարվելու

դեպքում այդ մասին կատարվում է համապատասխան նշում՝ ներառելով հրաժարվելու պատճառները, որը կցվում է հաշվառման քարտին:

40. Կանխարգելիչ հաշվառման շրջանակներում անչափահաս անձի կողմից ընտանեկան և կենցաղային բռնության կրկնումը կամ շարունակումը կանխարգելելու նպատակով վերջինիս վարքագծի նկատմամբ մշտադիտարկումն իրականացվում է տարածքային ստորաբաժանման կողմից՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի սահմանած կարգի համաձայն:

41. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասին հաշվառման վերցնելու մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում, ոստիկանության իրավասու ծառայողը գրավոր տեղեկացնում է հաշվառվողի ուսման և աշխատանքի վայրերի աշխատակազմերին, մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնին, տեղական ինքնակառավարման մարմնին և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնին (այսուհետ՝ միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն): Եթե ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասն արական սեռի 16 տարին լրացած անձ է, ապա այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է նաև անչափահասի հաշվառման վայրի տարածքային զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունը:

42. Ոստիկանության իրավասու ծառայողն ամսական առնվազն մեկ հանդիպում է ունենում անչափահասի կողմից ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ, ինչի վերաբերյալ կազմում է տեղեկանք, որը ստորագրվում է ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի կողմից:

43.Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած անչափահասը, եթե նրա արարքում բացակայում են հանցակազմի հատկանիշները, ոստիկանության կողմից ուղղորդվում է վերականգնողական ծրագրերի իրականացման համապատասխան համայնքային և պետական կենտրոններ: Անչափահասին համայնքային և պետական կենտրոններ ուղղորդելու վերաբերյալ գրության պատճենը կցվում է կանխարգելիչ հաշվառման քարտին:

44. Կանխարգելիչ հաշվառման քարտին կցվում են՝

1) կցվող փաստաթղթերի ցանկը.

2) կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու թույլտվության մասին ոստիկանության տարածքային բաժնի պետին ներկայացված զեկուցագիրը.

3) կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու հիմք հանդիսացած փաստաթղթերը.

4) կազմված զեկուցագրերը, ընթացիկ աշխատանքների մասին տեղեկանքները.

5) անչափահասին հաշվառելու մասին անչափահասին և նրա օրինական ներկայացուցչին իրազեկելու վերաբերյալ տեղեկանքը.

6) հաշվառվող անչափահասի 3x4 չափի լուսանկարը, ծննդյան վկայականի կամ առկայության դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

7) հաշվառվող անչափահասի վերաբերյալ եռամսյակը մեկ ստացվող բնութագրերը՝ ուսման կամ աշխատանքի վայրերից.

8) հաշվառվողի և նրա օրինական ներկայացուցչի հետ մշտադիտարկման շրջանակներում անցկացված հանդիպումների, ինչպես նաև ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձի հետ հանդիպումների վերաբերյալ տեղեկանքները.

9) պետական, հասարակական և այլ շահագրգիռ կազմակերպություններից հաշվառվող անչափահասի վարքագծի վերաբերյալ ստացված տեղեկությունները և այլ փաստաթղթեր.

10) մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի, խնամակալության և հոգաբարձության մարմնի, վերականգնողական կենտրոնի, համագործակցության շրջանակներում ստացված՝ անչափահասի վերաբերյալ փաստաթղթեր, տեղեկանքներ.

11) հաշվառվող անչափահասին հաշվառումից հանելու թույլտվության վերաբերյալ ոստիկանության տարածքային բաժնի պետին ներկայացված զեկուցագիրը.

12) հաշվառվող անչափահասին հաշվառումից հանելու հիմք հանդիսացած փաստաթղթերը:

45. Հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարելու համար տարածքային ստորաբաժանումում հաշվառման մեջ գտնվող անչափահասի կողմից ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելու դեպքում, վերջինիս վերաբերյալ սույն հրամանի դրույթների համապատասխան կազմված կանխարգելիչ հաշվառման քարտը միացվում է անչափահասի վերաբերյալ կազմված հաշվառման քարտին և վարվում է համատեղ: Հաշվառման քարտի վարման ժամկետը հաշվարկվում է ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելու համար կազմված կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու օրվանից:

46. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրելու համար տարածքային ստորաբաժանումում կանխարգելիչ հաշվառման մեջ գտնվող անչափահասի կողմից հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարելու դեպքերում նրա վերաբերյալ վարվող հաշվառման քարտը միացվում է կանխարգելիչ հաշվառման քարտին և վարվում է համատեղ: Կանխարգելիչ հաշվառման քարտի վարման ժամկետը հաշվարկվում է հանցագործություն կամ այլ իրավախախտում կատարելու համար կազմված հաշվառման քարտ կազմելու օրվանից:

47. Ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած և կանխարգելիչ հաշվառման մեջ գտնվող անչափահասին հատուկ մասնագիտացված (ռազմամարտական) և հատուկ հանրակրթական (հակասոցիալական վարք դրսևորած երեխաների համար) ուսումնական հաստատություններ տեղափոխելու դեպքում կանխարգելիչ հաշվառման քարտը 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է հիշյալ ուսումնական հաստատությունների գտնվելու վայրի տարածքային ստորաբաժանում՝ հաշվառվողի վարքագծի նկատմամբ հետագա հսկողություն սահմանելու համար:

48.Հաշվառման մեջ գտնվող անչափահասի վերաբերյալ կազմված քարտի վարումը դադարեցվում է՝

1) եթե լրացել է կանխարգելիչ քարտի վարման ժամկետը.

2) մահվան դեպքում.

3) ազատազրկման դատապարտվելու դեպքում.

4) եթե պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշումը վերադասության կարգով կամ դատարանի որոշմամբ ճանաչվել է անվավեր կամ օրենքով նախատեսված դեպքերում վերացվել է:

49. Անչափահասին հաշվառումից հանելու վերաբերյալ կազմվում է տեղեկանք՝ ըստ Ձև 2-ի: Անչափահասին հաշվառումից հանելու մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացվում են անչափահասը, նրա օրինական ներկայացուցիչը, ուսման և աշխատանքի վայրերի աշխատակազմերը, տեղական ինքնակառավարման մարմինը, մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը, միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնը, վերականգնողական ծրագրերի իրականացման համապատասխան համայնքային և պետական կենտրոնները: Եթե անչափահասն արական սեռի 16 տարին լրացած անձ է, ապա այդ մասին 3 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացվում է նաև անչափահասի հաշվառման վայրի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությունը:

4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՍՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

50. Ոստիկանության իրավասու ծառայողն իրավունք ունի՝

1) այցելել ընտանեկան և կենցաղային բռնություն գործադրած և հաշվառման մեջ գտնվող անձանց բնակության, ուսման, աշխատանքի վայրեր, զրույցներ անցկացնել հաշվառվողի, (անչափահասի դեպքում նաև նրա օրինական ներկայացուցիչների) հետ.

2) կազմակերպություններից և ուսումնական հաստատություններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկություններ.

3) հաշվառման մեջ գտնվող անչափահասին ուղղորդել վերականգնողական ծրագրերի իրականացման համապատասխան համայնքային և պետական կենտրոններ.

4) համագործակցել և անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ տեղական ինքնակառավարման մարմնից, մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժիններից, սոցիալական աջակցություն տրամադրող ծառայություններից, հասարակական կազմակերպություններից:

51. Ոստիկանության իրավասու ծառայողը պարտավոր է՝

1) հաշվառման մեջ գտնվող անձանց հետ աշխատանքներ իրականացնելիս հարգել նրանց իրավունքները, պատիվն ու արժանապատվությունը.

2) պահպանել մասնավոր և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը.

3) առաջնորդվել սույն կարգով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

Ձև N 1

_____

/ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանման անվանումը/

ՏԵՂԵԿԱՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____ թիվ _____ « ____ » _____ 20 թ.

/նշել քարտի գրանցման համարը/ /հաշվառման վերցնելու օրը, ամիսը, տարին/

_____

հաշվառման վերցնելու հիմքերը/

1. _____

/հաշվառվողի ազգանունը, անունը, հայրանունը, սեռը/

2. Ծննդյան օրը, ամիսը, տարին «_____» _____ 20 թ.

3. _____

/հաշվառվողի բնակության վայրը /

Ծանոթություն՝ 1. Սույն տեղեկանքը լրացվում և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչություն է ուղարկվում 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Անձին հաշվառումից հանելու և այլ փոփոխություններ լինելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահվում ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչություն:

_____ պետ

/ ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանման անվանումը/

ոստիկանության_____

/կոչումը/

_____

/անունը, ազգանունը, հայրանունը/

« _____ » _____ 20 թ.

Ձև N 2

_____

/ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության
տարածքային ստորաբաժանման անվանումը/

ՏԵՂԵԿԱՆՔ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1._____

/հաշվառվողի ազգանունը, անունը, հայրանունը, սեռը/

2. Ծննդյան օրը, ամիսը, տարին «_____» _____ 20 թ.

3. «_____» _____ 20 թ.

/հաշվառումից հանելու օրը, ամիսը, տարին/

_____

/հաշվառումից հանելու հիմքերը/

_____

Ծանոթություն՝ 1. Հաշվառվողին հաշվառումից հանելու դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղյակ է պահվում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչությանը:

_____ պետ

/ոստիկանության տարածքային ստորաբաժանման անվանումը/

ոստիկանության_____

/կոչումը/

_____

/անունը, ազգանունը, հայրանունը/

« _____ » _____20 թ.

ՁԵՎ N 3

ՏԵՂԵԿԱՏՈՒ ՔԱՐՏ N _____

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻՆ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1._____

/ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանումում հաշվառման մեջ գտնվող անձի անունը, ազգանունը, սեռը/

2._____

/ծննդյան վայրը և տարեթիվը/

3._____

/բնակության հասցեն և հեռախոսի համարը/

4._____

/աշխատանքի կամ ուսման վայրը, պաշտոնը, հեռախոսի համարը/

5.Հաշվառման վերցնելու հիմքերը_____

_____

_____

_____

_____

6.Անձը բնութագրող տվյալներ_____

_____

_____

7._____

/գործադրված ընտանեկան և կենցաղային բռնության տեսակը/

_____

_____

Քարտը կազմեց _____

/պաշտոն, կոչում, անուն, ազգանուն/

« »_____20 ___թ.

Ձև N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

_____

/ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանման անվանումը/

ՄԱՏՅԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ

թիվ_____

Սկսվել է « »_____20__ թ.

Ավարտվել է « »_____20__ թ.

Հ/հ	Ա.Ա.Ա. ծննդյան օր, ամիս, տարի և վայր	Բնակության վայրի հասցեն, հեռ. համարը	Աշխատանքի վայրը, պաշտոնը, ուսման վայրը, հեռ. համարը	Հաշվառման վերցնելու և կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու հիքերը	Կանխարգելիչ հաշվառման քարտ կազմելու օրը, ամիսը, տարին	Կանխարգելիչ հաշվառման քարտ վարողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, անունը, հայրանունը	Երբ, ում նկատմամբ և ընտանեկան և կենցաղային բռնության տեսակը	Կանխարգելիչ հաշվառումից հանելու օրը, ամիսը տարեթիվը	Կանխարգելիչ հաշվառումից հանելու հիմքերը	Ծանոթություն
1	2	3	4	5	6	7	8	9	10	11

ՁԵՎ N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

_____

(ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության տարածքային ստորաբաժանման անվանումը)

ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏ ԹԻՎ ----------

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

_____

(հաշվառվողի ազգանունը, անունը, հայրանունը, սեռը)

Ծնված՝ « » _____ թ.

_____

(բնակության հասցեն)

_____

(նշել կանխարգելիչ հաշվառման վերցնելու հիմքերը)

_____

Սկսվել է « » _____ 20 թ.

Ավարտված է « » _____ 20 թ.

Հաշվառվողի լուսանկարը

« » _____ 20 թ.

(լուսանկարի փակցման ամսաթիվը)

Նշումներ՝

Ցուցակի համաձայն
կանխարգելիչ հաշվառման քարտում
կարված և համարակալված է ընդամենը

« » _____ թերթ

« » _____ 20 թ.

_____

(ոստիկանության իրավասու ծառայողի ստորագրությունը,

_____

(ազգանունը, անունը, հայրանունը)

(լրացվում է անձին կանխարգելիչ
հաշվառումից հանելու դեպքերում)

« » _____ 20 թ.